

տեալ¹ էր, եւ ընդ նոսա պաշտանեայք բանակին: 65 Եւ գնացին տարան Եդին զմարմինն ի տեղուջն՝ ուր յառաջագոյն էր կայեանք խցկանն իւրոյ յերկրին Տարաւոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մաւտ յակն աղբերն՝ ուր առնէր Գրիգոր զմկրտութիւնսն աշխարհագաւր բազմութեանն, ի տեղուջն՝ որ անուանեալ կոչի Հացեաց դրախտ: 66 Յայնմ տեղուջ ծածկեցին զմարմին սրբոյն Դանիելի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեսլեանն ըստ հրամանի նորա տուեալ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս որդւոցն Յուսկան, եթէ ո՛րպէս ընթադրեալ առ ոտն հարին զմեծ քահանայութեան զԱստուծոյ զպատին:

2 Ապա խորհուրդ արարին մատուցանել զորդի սրբոյն Յուսկան ի քահանայութիւն հարցն վարդապետութեանն: 3 Ապա առանց իւրեանց կամացն ըմբռնեցան, եւ բռնաբարեցան ի միաբանութեան եպիսկոպոսացն. զի կալեալք, ակամայ առեալք զձեռնադրութիւն սարկաւագութեան՝ հարկեցան Պապն եւ Աթանագենէս: 4 Որոց ընդ ոտն² հարեալք զաւանդն հոգեւորն պատուի, անծամբ զանձինս իւրեանց, խտորատուր³ յարուեստն զինուորութեանն զինեցան, եւ յերկիր կործանեցան: 5 Եւ ընտրեցին զերկրաւոր կեանս, եւ առին եւս իւրեանց կանայս զքորս թագաւորին, եւ մերժեցին զանձինս իւրեանց ի ժամանագութենէ Աստուծոյ: 6 Բայց անուանք կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Վարազդուխտ, նոքա անորդիք անգաւակ ելին յաշխարհէ. անուն կնոջն Աթանագենի՝ Բամբիշն. ի սոցանէ ծնաւ այր սքանչելի եւ զարմանալի Ներսէս, որ առ յապայն եկաց քահանայապետ:

7 Բայց յայնմ ժամանակի ոչ ոք գոյր, որ առաջնորդէր նոցա զքահանայապետութիւնն: 8 Ապա խորհուրդ արարին՝ թէ զո՛ր զտցեն իւրեանց առաջնորդ. ապա կամ եղել ամենեցուն առ հասարակ, զի ի նմին տանէ իշխանութեանն Գրիգորի զտցեն, որ կայցի նա զայթոռ հարցն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս Փառինայ, որ կալաւ զայթոռ հայրապետացն:

2 Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն երեց, ի գաւառէն Տարաւոյ, ի մեծէ մարգարեանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ տուն աղաւթից եւ խնդրուածոց ի հանգիստ սրբոցն, զի տեղին այն նմա էր հաւատացեալ: 3 Ապա կոչեցին զնա առ արքայն. եւ առաքեաց զնա պատա-

1 *Թերեւս* վարդապետ կարգեալ

2 *Յոր. չիք* ընդ ոտն

3 *Յերիս օրինակս*՝ խտորատուր